

ԽՍՔԱՍՏՐԱԿԱՆ

«ԹԱՓՕՐ ԼԵՐԱՆ ՎՐԱՅՈՎ Կ'ԻՋՆԵՄ...»

**ԱՌԱՔԵԼՈՅ ՇԱԻԻՂՈՎ, ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔԵՐՈՎ,
ՏԱԹԵԻԵՍՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒ ՔԱՅԼԵՐՈՒ ԿՇՈՒՅԹՈՎ...»**

«Աստուած յոյս է, եւ նրա մէջ խաւար չկայ,
բոլորովի՛ն չկայ: Եթէ ասեմք, որ հաղորդութեան
մէջ եմք նրա հետ, բայց հայրենի խաւարի մէջ,
ստում եմք, եւ նշմարտութիւնը չենք կատա-
րում»:

(Ա ՂՈՎԷ. Ա 5-7)

«Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հաւանեցի,
որա՛ն յսեցէք»:

(ՄԱՏՔ. ԺԷ 5)

Աստվածաշունչ Մատյանի Ծննդոց Գիրքը մեզ ավանդում է, թե Աստված վեցերորդ օրն ստեղծեց իր արարչագործության քաղց ու պակշը՝ մարդուն, իր պատկերի նման, նրան գեղեցիկ ու երջանիկ ստեղծեց: Մեր նախահայրն ու նախամայրը սիրում էին Աստծուն, իսկ Աստված՝ նրանց: Ամենակարող Տերն իր սիրելիներին օժտեց նաև վեհը, կատայայալն ու վսեմը զգալու շնորհը՝ համաժամանակյա ծանոթացնելով ստորին, ցածրին ու նսեմին:

Իր անցած ողջ ուղու ընթացքում երկվեցկվեց մարդկությունը: Վեհը դարձավ փոխամասնության առանձնաշնորհը, իսկ նսեմ զգացումները եկան լրացնելու քաղցը, քանզի մարդը հեռացավ Տիրոջից, քանզի խախտեց աստվածային պատվիրանները և դարձավ հավիտեանական մեղքի գերին: Բայց բոլոր ժամանակներում էլ նա դեպի վեր հատեց իր հայացքը՝ որոնելով Աստծուն: Հենց որոնման այդ դժվարին նախապարհին էլ որդեգրեց քարծուցների նվաճման դժվարին ուղով վեր ելնելու սկզբունքը: Տերն Ինքն առաջնորդեց մարդուն դեպի քարծուց՝ այնտեղ թելադրելու իր պատվիրանները: Այդպես Հին Ուխտի նախանձախնդիր օրենսգետը՝ Մովսեսը, քարծրացավ Սինա լեռ, այդ վեհ ձգտումով Աստվածորդին առանձնացավ Թափոթ լեռան վրա՝ աղոթի ու առանձնության մեջ վերգտնելու սեփական հոգու վեհությունը և ապա փոխանցելու այն համայն մարդկությանը: Իր Լեռան ֆարգում (ՄԱՏՔ. Ե. Ջ. Է) ևս նա կատարելության կոչ արեց մարդկությանը. «**եղերուք կատարեալք, որպէս եւ երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է**» (ՄԱՏՔ. Ե 48):

Ցավոք, ոչ բոլորը հեթանոսաց Առաքյալի նման կարող են ասել, թե «**ես այնպէս ընթանամ, ոչ որպէս յաներեւոյսս, այնպէս մրցիմ, որպէս ո՛չ թէ զհողմս ինչ կոծելով**» (Ա ԿՈՐՆԹ. Թ 26), այսինքն՝ անորոշության ու խափարի մեջ չէր խարխալում, գիտեր գնալի՛ք ուղին, նաև գիտեր, թե ուր է տանում այն, կամ ում էր հետևում և ում շավղով էր առաջ ընթանալու: Արդ, մեզանից յուրաքանչյուրի համար ևս, ձճնդյան օրին իսկ սկսյալ, հստակ է. Աստվածորդին՝ Հիսուս, գծեց

ֆրիստոնյայի կատարելության ուղին Իր անձնական օրինակով և վարդապետությամբ, սեփական արյունը որպես փրկագին տվեց և պատգամեց ընդհանուր միայն այն ճանապարհով, որ տանում է դեպի Երկնավոր Հայրը:

Սակայն մե՞նք բազմիցս սայթափեցինք և սայթափում ենք առ այսօր: Ամեն անգամ մտովի փորձում ենք վերականգնել մեր հոգու վեհությունը սկզբնատիպն ու աղանա անդրադարձը մեզ դեպի ետ, դեպի մանկությունն է տանում: Հիշովի մաքրության անմեկնելի խորհուրդ: Մանուկների հոգու մաքրությունը, որպես կատարյալ օրինակ, քանիցս հիշատակել է նաև մեր Տերը: Հոգևորությունը թոթափելու և հոգու վեհությունը վերգտնելու յուրօրինակ դրսևորում չէ՞ր արդյո՞ք Հիսուսի՝ երեսնամեկի նկատմամբ ունեցած վերաբերմունքը. «*Թույլ տվեք այդ մանուկներին ինձ մոտ գան*» (Ղուկ. ԺԸ 16):

Երբ հոգևած կամ կյանքի զժվարությունների տակ կհա՞ծ ենք լինում, դիտելով մանուկների անեղ ու աշխույժ խաղը, լսելով վարակիչ ծիծաղը, հաճախ ենք նրանց երանի տալիս: Միայն այսօր: Սակայն շատ քիչ դեպքերում ենք փորձ անում՝ պահել մեր հոգին այնպես մաքուր ու անարատ, ինչպես այդ մանուկներինն է: Երբևէ ձգտո՞ւմ ենք հեռու վանել մեզանից չարը, սգեղը, նախանձը, որ դուրս դուրս քանալով մե՞նք ենք մեր հոգում և արագ, ամուր ու հիմնավոր արմատներ ցնտում: Փորձո՞ւմ ենք ուրախանալ դիմացինի հաջողությամբ, նրա հետ կիսել իր երջանկության քերկրանքը, թե՛ ընդհակառակը: Ամեն ինչի իրավունքը վերապահելով միայն սեփական ճշ-ի՞ն՝ մեր չարախոսություններով ու նսխանձի թույնով դժոխքի ենք վերածու՞մք նրա փոքր ի շատե՞ս երջանիկ բվացող կյանքը:

**

Հոգու վեհություն, կատարելություն. առօրյա կյանքում ամենքս թերևս հաճախակի ենք փորձում այս շնորհներով «վերադաստիարակել» մեզ «դուր չեկող», մեր կարծիքով՝ ոչ ճիշտ ապրող «մտերիմին»: Սակայն, ցավոք, մոռանում ենք ինքներս մեզ դիտել սեփական կյանքի եայելիում: Թերևս ամենից շատ մե՞նք կարիք ունենք վեհանալու, մեր ձայացքը դեպի երկնքի մաքրությանը, անտառի վեհությանը և լեռների բարձրությանը հառելու: Մոռանում ենք, որ մեր այս անձուկ ու դժվարին կյանքում առանց այն էլ շատ են թանձր գույները: Մոռանում ենք, որ մեր նմանից վատությունն անելն այնքա՞ն դուրսին է, լավությունն անելն է դժվար: Նույնիսկ դիմացինին լավն ու բարին ցանկանալու համար ամենից առաջ անհրաժեշտ է սիրել սեփական անձը և, վեր բարձրանալով գուտ անձնակներից, նվաճել անանձնական սիրո բարձունքները: Մեր Տերը մեզ հենց այդ *սերն* ուսուցանեց իր երկրավոր ողջ կյանքի ընթացքում:

**

Մենք այս անգամ ևս երկյուղիվ և ակնածանոք ծերադրեցինք մեր Տիրոջ՝ Հիսուս Բրիստոսի Այլակերպության տոնի առիթով մատուցվող Սուրբ և անմահ Պատարագի ընթացքում, մտովի վերակերպվորեցինք Աստվածաշնչյան պատումը և մեկ անգամ ևս վերիշեցինք *պայծառակերպություն* բառի իմաստը, որ է՝ դառնալ հստակ, ճյուղաճեմբմակ, մաքուր:

Մարդկային կյանքի բնորոշ հատկանիշն է ժամանակի ընթացքում հեռու չմնալ

սին ու դատարկ խոսքեր գործածելուց, անվայելույ արարքներ կատարելուց: Ահա այդ է պատճառը, որ մենք պետք է ժամանակ առ ժամանակ ձգտենք առանձնություն՝ աղոթելով ու զոջմամբ վերգտնելու ինքներս մեզ, Տիրոջ օրինակով ու Նրա օգնությամբ կերտելու մեր կյանքի ճշմարիտ պատկերը: Հիսուս Իր կյանքի օրինակով պարզ ու հստակ բացատրեց մեզ, որ յուրաքանչյուրիս կյանքը նման է մի անսովոր ճամփորդության: Մեր անցնելիք ճանապարհին անհրաժեշտ է պարբերաբար դադար առնել, հանգստանալ ու նաև՝ բնեկ, վերլուծել մեր ամեն մի քայլը: Կյանքը լի է անակնկալներով: Դրանք անկանխատեսելի են և շատ հաճախ տարբեր անդրադարձներ են ունենում մեր կյանքի ընթացքի վրա. կարող են հանելի ու ցանկալի լինել, կարող են լինել և անցանկալի ու տհաճ: Բոլոր դեպքերում էլ մարդ-արարածի միակ ու ամենակարևոր զենքը պետք է լինի **աղոթքը**: Առանձնության պահով նա պետք է կարողանա Աստու օգնությամբ պայծառանալ, մտրվել ու կրկին վերահաստատվել աստվածահասն և աստվածընդունելի կյանքի ընթացքի մեջ:



Հայ հավատավորի կյանքում **ԵԿԵՂԵՑԻՆ** ներկայանում է որպես հավատի **ԹԱՐՈՐ ԼԵՌ**, ուր հանախակի ենք «քարձրանում»՝ մեր մեջ զգալու Աստու ներկայությունը, սերը, խաղաղությունը: Իսկ Պայծառակերպության վեհաշում տոնին առավել խորությամբ է դրսևորվում այդ զգացումը: Մեր Տիրոջ այլակերպության խորերդով, ասես, նորոգվում են նաև մեր հոգիները, պայծառության մի շող գալիս է՝ վերամաքելու, վերասրբելու և վերակենսավորելու մեզ, քարության ու սիրով «լվանալու» առօրյա, կենցաղային մեղքերից, կրկին անգամ մատնանշելու Աստվածային պատվիրաններով սրբագործված ճանապարհը, որը համայն Իրիստոնյա աշխարհին առաջնորդում է դեպի հավիտենական կյանք:



Հիրավի, **Հայաստանյայց Եկեղեցին Թարոր լեռն** է հայ հավատավորի: Մի շատ գեղեցիկ առիթով (Սյունյաց աշխարհն այցելած ժամանակ, Տաթևի վանական համալիրը դիտելիս) Ամենայն Հայոց Հայրապետը (այն ժամանակ Մեծի Տանն Կիլիկիո Կարողիկոս) ասել է. «Այստեղ, առաջի քան ունե տեղ աշխարհի մէջ, «իմացայ» թէ ինչո՞ւ Աստուածաշունչի մէջ լեռ-ը զուգակցուէր էր սրբութեան, վեհութեան, աստուածաբնակութեան յղացներուն հետ» (Գարեգին Բ Կարողիկոս, «Հրաշխ Տաթևի Թափօր լեռան լանջերուն...», Անթիլիաս, 1989, էջ 10): Հավատացած եմ, որ ճիշտ նույնպիսի խոսքեր կասեր Նորին Սուրբ Օծույթունը, եթէ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության օրը լիներ Արցախ աշխարհում, ուր Արքայույս Մյուռոնով ծովեց Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին, որով, ասես, պայծառակերպվեց նաև Հայոց հիմնավորց աշխարհի այս փոքրիկ հողակտորում բնակվող հայ հավատավորի հոգին ևս: Բայց փորձենք ինքներս նկարագրել այդ վեհությունը Հայոց Հայրապետի գեղախոսութեամբ:

«Մի նոր շունչ է փչում մեր հայրենի աշխարհի վրայ: Հայ գիւղացու կարճնեղ ձեռներով մշակուած, հերոսների և նահատակների արիւնով զնուած և պաշտպանուած, հայ աշխատուորների քրտինքով մշտանորոգ ծաղկած ու ծաղկող,

կառուցուող ու շենացող մեր հայրենի հողի վրայ մի նոր ոգի է վերածնունել: Դա մեր ոգին է, մեր մահով շմահացած, մեր գրեթե ու տաճարներով, մեր խաչքարերով և յուշարձաններով, մեր երգերով ու պարերով, մեր աւանդութիւններով ու բարեքերով, մեր վանքերով ու վանականներով յաւէտ ապրող ոգին է, որ հիմա գարնան շունչ է ստացել ևս լեռներում և ձորերում, քաղաքներում և գիւղերում: ...Մենք էլ ժառանգել էինք դրանք մեր հայրերից, նրանք էլ՝ իրենց նախահայրերից, Հայկից ու Արամից, Տիգրանից ու Արշակից, Տրդատից ու Վաղարշակից, Երմաւկածի Մուշեղից ու սպիամարմին Մանուէլից, Ս. Գրիգոր Պարբեւից ու Ս. Մեսրոպ Մաշտոցից, Կարմիր Վարդանից ու Քաջն Վահանից, Պատմահայր Մովսէս Խորենացուց ու Աւարայրի երգիչ Եղիշէից, Անյաղթ Դաւիթից ու գիտնական Շիրակացուց, աղօթասույզ Նարեկացուց և Շնորհալի Ներսէսից, Իմաստաւեր Յովհաննէս Սարկաւազից և Մխիթար Գօշից, Եսայի Նշեցուց և իմ անմահ ուսուցչից՝ Յովհան Որոտնեցուց: Այս ոգին է, որ ապրեցրել է ... բոլոր նրանց, ովքեր իրենց մահով ձեզ կեանք են կտակել...:

...Գնացէ՛ք եկեղեցի և պիտի լսէ՛ք յաւերժախօս ճշմարտութեան աննուաղելի, անստուեր և սրբանունը բառերը մեր սրբազան հայրերին.

Մատի՞ք առ Տէր և առէ՞ք զոյս

մաշակեցէ՞ք և տեսէ՞ք, զի քաղցր է...» (Նույն տեղում, էջ 29-31):



Այո՛, մեր Տերը՝ Հիսուս, Իր Պայծառակերպութեան մեծ խորհրդով մեզանից յուրաքանչյուրի առջև բաց է անում մեր անձնական կյանքի ոչ այնքան հաճախակի բացվող գրէի վակ էջերը: Մեր տաղտկալի առօրյայից ու աշխատանքների անցմանակ ու հոգեքննուցիչ շղթայից հետո, Մայր Եկեղեցին դառնում է մեր հոգիների պլակերաբան լեռը, ուր աղոթքի շնորհիվ ապրում ենք Բարձրալի ներկայութիւնը, Նրա սիրտ անբաժուց ջերմութիւնն ու հոգածութեան մշտանորոգ գագաթումը:

Ավելի մասնավորեցնեմ խոսես. *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Թաքոր լեռն* է համայն հայութեան, իսկ *Ամենայն Հայոց Վեհապետը՝* երկրավոր տերն իր հավատավոր հոտի: Եկե՛ք գոն և այսօր մի պահ վերանայն առօրեական, մեղավոր կյանքի հոգսաշատութիւնից, բացե՛ք մեր հոգու դռները սիրտ ու բարութեան առջև, մանկացած հոգով, միասնաբար, մտովի կամ իրապես քայլե՛ք դեպի մեր հավատի *Թաքոր լեռը՝* ծնրադիր աղոթքի ոսկեհյուս շղթան խոնարհաբար ու ակնածանո՛ղ դնելու մեր հոգևոր հօր՝ Հայոց Հայրապետի ոտքերի առջև, ինչպես Առաքյալները խոնարհվեցին ու երկրպագեցին այլակերպած Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, Ում և խոնարհվում ու երկրպագում ենք մենք մոտ երկու հազար տարիներ շարունակ... և մաղթել Հայոց Հայրապետին բարի ու երջանկաբեր վերադարձ ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ի *ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ*, ուր այնքան կարոտով լեցուն սրտեր տրոփումնով են սպասում այդ լուսաշող օրվան: Եվ այդ ժամանակ իրավամբ մեզանից յուրաքանչյուրը կարող է ասել.

«Թաքոր լեռան վրայով կ'իջնեմ...»

Առաջիկոց շալիղով. Քրիստոսի հետքերով, Տաթևեան մեր հայրերու քայլերու կշռույթով: Լոյսը իջեր է հագիս մէջ և նոր լոյսեր բացեր այն աշխարհին մէջ որ զիս կ'ընէ զիս, ի հաղորդութեան հետն անոնց, որոնք եղան ընդ Քրիստոսի, Առաջիկական վկայութեամբ, Լուսաւորչեան տեսեամբ և Մաշտոցեան յաւերժագրութեամբ...» (Նույն տեղում, էջ 23):